ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N81-Ա
24 ՀՈՒՆԻՍ 2021Թ
«ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 2000 թվականի հունիսի 2-ի «Կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման կարգը հաստատելու մասին » N102 հրամանով հաստատված կարգի 1-ին մասի 1.5 կետի ե) ենթակետով և հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2021 թվականի հունիսի 21-ի N 79-Ա որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «Եղեգնաձորի երաժշտական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել հաստատության նյութական պատասխանատու անձանց:

6/24/2021

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2021թ հունիսի24-ի
N81-Ա որոշման

«Եղեգնաձորի երաժշտական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում հանձնման ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով ստեղծված հանձնաժողովի կազմը

Հանձնաժողովի նախագահ՝ Գաբրիելյան Ավագ	ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ
Անդամներ՝	
Կարապետյան Սեդա	ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի իրավաբանական բաժնի խորհրդական
Դավթյան Գվիտոն	ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր տնտեսագետ